ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈւ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրենի Ժ/Պ Ս. Ավանեսյան
«________» ________________2024թ.

# ՕՐԱՑՈւՑԱՅԻՆ–ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈւՄԸ *Առողջ ապրելակերպ*

ԴԱՍԱՐԱՆ *7* ԿԻՍԱՄՅԱԿ *I* ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ *2024-2025* ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ *17* (տարեկան) *1* (շաբաթական)

ԴԱՍԱԳՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *Առողջ ապրելակերպ ուսուցչի ձեռնարկ*

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ *Աստղիկ* ՀԵՂԻՆԱԿ *Լ. Ալեքսանյան, Մ. Մելքումովա, Ա. Բալայան, Ե. Մովսեսյան, Ժ. Գևորգյան, Ն. Վարդանյան, Շ. Քեռշկերյան, Ս. Հովհաննիսյան, Ռ. Մերիթ, Ա. Մկրտչյան*

ՈՒՍՈՒՑԻՉ *Մարինե Բաբայան*

Քննարկվել, հավանության է արժանացել ______________________
մեթոդմիավորման ______________________ նիստում: Արձանագրություն թիվ ________

Մեթոդմիավորման նախագահ ________________ *Անուշ Դաչունց*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ ________________ *Սերգեյ Ավանեսյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

| № | ԴԱՍԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ | ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ | ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ | ԳՐՔԻ ԷՋԸ | ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ | | | ԺԱՄԿԵՏԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ԸՆԴ | ՏԵՍ | ԳՈՐԾ | |
| ԹԵՄԱ 1 | Սննդի գովազդ և հիգիենա | | | | | | | |
| ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ | • Դրական ազդեցություն ունենալ աշակերտների սնվելու սովորությունների, սննդի ընտրության եւ առողջության վրա, ինչն իր հերթին դրականորեն է ազդում նրանց հաճախելիության եւ առաջադիմության վրա:<br>• Հարստացնել աշակերտների գիտելիքները սննդի ընտրության վրա ազդող գործոնների մասին:<br>• Ձեւավորել դիմադրողականություն սննդային, առողջապահական եւ սոցիալական մարտահրավերների, այդ թվում՝ գովազդի նկատմամբ:<br>• Ձեռք բերել սննդի հիգիենայի եւ սննդային թունավորումների կանխարգելման հմտություններ: | | | | | | | |
| ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ | 1. Բացահայտել սննդի ընտրության վրա ազդող գործոնները, դիմակայել հասակակիցների, լրատվամիջոցների եւ այլ խմբերի ու հաստատությունների ճնշումներին:<br>2. Տարբերակել այն գործոնները, որոնք ազդում են սովորողների՝ սննդի ընտրության վրա:<br>3. Բացատրել, որ սննդի գովազդը վաճառքի եղանակ է եւ ազդում է մարդկանց՝ սննդի ընտրության վրա:<br>4. Բացահայտել փողոցում վաճառվող սննդամթերքի հիգիենայի խնդիրները, հնարավոր վտանգները եւ կանխարգելման եղանակները:<br>5. Ճանաչել ամենատարածված սննդային թունավորումները, դրանց ախտանշանները եւ կանխարգելումը:<br>6. Կիրառել սննդի հիգիենայի սկզբունքները: | | | | | | | |
| 1 | Սննդի գովազդ, սննդի հիգիենա | • Աշակերտներին ծանոթացնել սննդի ընտրության վրա գովազդի հնարավոր ազդեցությանը:<br>• Աշակերտներին օգնել պահպանելու պատշաճ սննդային հիգիենան, երբ սնունդ են գնում կամ սնվում դրսում:<br>• Ներկայացնել մթերքի «պիտանելիության ժամկետը» ստուգելու հայեցակարգը: | • Բացահայտել սննդի ընտրության վրա ազդող բոլոր գործոնները, կարողանալ դիմակայել հասակակիցների, լրատվամիջոցների, այլ խմբերի ու հաստատությունների ճնշումներին:<br>• Տարբերակել այն գործոնները, որոնք ազդում են աշակերտների՝ սննդի ընտրության վրա:<br>• Բացատրել, որ սննդի գովազդը վաճառքի եղանակ է եւ ազդում է մարդկանց՝ սննդի ընտրության վրա:<br>• Բացահայտել փողոցներում վաճառվող սննդամթերքի հիգիենայի խնդիրները, հնարավոր վտանգները եւ կանխարգելման եղանակները: | | 1 | | 1 | |
| 2 | Առողջ սնվելու բաղադրատոմս ր սննդի անվտանգություն | • Աշակերտներին օգնել զարգացնելու խոհարարական գործնական հմտությունները՝ | • Ճանաչել ամենատարածված սննդային թունավորումները, դրանց ախտանշանները եւ ախտանշաններն ու կանխարգելումը: | | 1 | | 1 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սովորեցնելով նրանց պատրաստել իրենց սիրած կերակուրները պատշաճ ձեւով: • Հարստացնել հիգիենայի մասին 1-ին դասից քաղած գիտելիքները՝ հասկանալով, թե ինչպես կարելի է լավ հիգիենա պահպանել կերակուր պատրաստելու ընթացքում: | • Կիրառել սննդի հիգիենայի սկզբունքները: | | | | | |
| **ԹԵՄԱ 2** | Տարհանման պլան-ուրվագիծ, առաջին օգնություն | | | | | | | |
| **ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ** | Խթանել աղետների ժամանակ անհրաժեշտ գործողություններին եւ կանոններին տիրապետելու, տարհանման պլան-ուրվագիծը քայլ առ քայլ մշակելու կարողությունները: Օգնել գիտակցելու տարհանման վարժանքի նշանակությունը արտակարգ իրավիճակներում: Նախազգուշական միջոցառումների շնորհիվ կանխել արեւահարությունը, ցրտահարությունը, ցուցաբերել ԱՕ արեւահարության եւ ցրտահարության նախանշանների դեպքում: | | | | | | | |
| **ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ** | 1. Մշակել տարհանման պլան-ուրվագիծ: 2. Տարբերակել եւ առաջնորդվել տարհանման պլան-ուրվագծում կիրառվող պայմանական նշաններով: 3. Նախապատրաստել աղետի կապոց. թվարկել անհրաժեշտ իրերը, փաստաթղթերը, սննդամթերքը, հագուստը: 4. Ճանաչել մարմնի գերտաքացման եւ արեւահարության, գերսառեցման ու ցրտահարության նշանները: 5. Ցուցաբերել առաջին օգնություն մարմնի գերտաքացման եւ արեւահարության, գերսառեցման ու ցրտահարության դեպքում: Նշել՝ ինչ չի կարելի անել առաջին օգնություն ցուցաբերելիս: | | | | | | | |
| 3 | Տարհանման պլան-ուրվագծի մշակման քայլերը | Խթանել աղետների ժամանակ անհրաժեշտ գործողություններին եւ կանոններին տիրապետելու, տարհանման պլան-ուրվագիծը քայլ առ քայլ մշակելու կարողություններ: | • Մշակել տարհանման պլան-ուրվագիծ: • Տարբերակել եւ առաջնորդվել տարհանման պլան-ուրվագծում կիրառվող պայմանական նշաններով: | | 1 | | 1 | |
| 4 | Տարհանման պլան-ուրվագծի մշակման քայլերը (շարունակություն) | Խթանել աղետների ժամանակ անհրաժեշտ գործողություններին եւ կանոններին տիրապետելու կարողությունը: Օգնել գիտակցելու տարհանման վարժանքի նշանակությունն արտակարգ իրավիճակներում: | • Մշակել տարհանման պլան-ուրվագիծ: • Տարբերակել եւ առաջնորդվել տարհանման պլան-ուրվագծում կիրառվող պայմանական նշաններով: • Նախապատրաստել աղետի կապոց. թվարկել անհրաժեշտ իրերը, փաստաթղթերը, սննդամթերքը, հագուստը: | | 1 | | 1 | |
| 5 | Անհապաղ օգնություն մարմնի գերտաքացման և արևահարության, գերսառեցման և ցրտահարության դեպքում | Նախազգուշական միջոցառումների իրականացնելու շնորհիվ կանխել արեւահարություն, ցրտահարությունը: Արեւահարության, ցրտահարության նախանշանների դեպքում ցուցաբերել առաջին օգնություն: | • Ճանաչել մարմնի գերտաքացման եւ արեւահարության, գերսառեցման ու ցրտահարության նշանները: • Ցուցաբերել առաջին օգնություն մարմնի գերտաքացման եւ արեւահարության, | | 1 | | 1 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գերսառեցման ու ցրտահարության դեպքերում: Նշել՝ ինչ չի կարելի անել առաջին օգնություն ցուցաբերելիս: | | | | | |
| ԹԵՄԱ 3 | Մարմնի պատկեր,ինքնագնահատական և ինքնավերաբերմունք | | | | | | | |
| ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ | Արժեւորել ինքնագնահատականը եւ դրական ինքնավերաբերմունքը, վերհանել դրական ինքնագնահատականի ձեւավորման համար անհրաժեշտ ներքին ռեսուրսները: Օգնել ընկալելու անձի արժեքը ներքին եւ արտաքին առանձնահատկությունների ամբողջականության մեջ: | | | | | | | |
| ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ | 1. Ընկալել, որ հասունացման շրջանում ֆիզիկական փոփոխություններն անխուսափելի են եւ խիստ անհատական:<br>2. Մեկնաբանել գեղեցկության չափանիշները մեդիայում:<br>3. Վերլուծել սեփական դրական որակները, հաջողությունները եւ ուժեղ կողմերը:<br>4. Մեկնաբանել դրական ինքնավերաբերմունքի եւ սեփական արտաքինը ընդունելու կարեւորությունը: | | | | | | | |
| 6 | Դրական ինքնավերաբերմունք | Խթանել ինքնաճանաչումը, դրական ինքնավերաբերմունքը, վերհանել դրական ներքին ռեսուրսները՝ կիրառելով դրանք որպես սեփական անձն իր ամբողջականության մեջ դիտարկելու միջոց: | • Վերլուծել սեփական դրական որակները, հաջողությունները եւ ուժեղ կողմերը: | | 1 | | 1 | |
| 7 | Վերաբերմունքը սեփական արտաքինի և դրա փոփոխությունների նկատմամբ | Օգնել գիտակցելու, թե ինչ գործոններ են ազդում դեռահասության շրջանում մարմնի պատկերի ընկալման վրա (ԶԼՄ-ներ, անիրատեսական գեղեցկության չափանիշներ):<br>Դիտարկել դեռահասության շրջանում մարմնի փոփոխությունները եւ դրանց վերաբերյալ անհանգստությունը: | • Մեկնաբանել գեղեցկության չափանիշները մեդիայում:<br>• Ընկալել, որ հասունացման շրջանում ֆիզիկական փոփոխություններն անխուսափելի են եւ խիստ անհատական:<br>• Մեկնաբանել դրական ինքնավերաբերմունքի եւ սեփական արտաքինը ընդունելու կարեւորությունը: | | 1 | | 1 | |
| 8 | Ինքնագնահատական, ինչպիսի՞ն եմ ես | Խթանել դրական ինքնավերաբերմունքի եւ դրական ինքնագնահատականի կարեւորության գիտակցումը: | • Մեկնաբանել դրական ինքնավերաբերմունքի եւ սեփական արտաքինի ընդունման կարեւորությունը:<br>• Վերլուծել սեփական դրական որակները, հաջողությունները եւ ուժեղ կողմերը: | | 1 | | 1 | |
| ԹԵՄԱ 4 | Ռիսկային վարքագծի պատճառները, հետևանքները | | | | | | | |
| ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ | • Ծանոթացնել ռիսկային վարքագծին, դրա դրդապատճառներին:<br>• Նկարագրել ծխախոտի, ծխախոտային արտադրանքի, նարգիլեի, նիկոտին պարունակող այլ արտադրատեսակների (վեյփեր, սնուս եւ այլ) կարճաժամկետ եւ երկարաժամկետ ազդեցությունը:<br>• Տեղեկացնել կախվածության նշանների, վտանգների եւ հետեւանքների մասին:<br>• Օգնել գիտակցելու եւ նվազեցնելու ուրիշների ազդեցությունն իրենց որոշումների վրա:<br>• Ներկայացնել եւ դիտարկել տարբեր հնարավոր վտանգավոր իրավիճակներ, օգնել մշակելու դրանցից խուսափելու միջոցներ եւ անվտանգության կանոններ: | | | | | | | |
| ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ | 1. Ներկայացնել՝ ինչու են դեռահասները հակված ռիսկային վարքագիծ դրսեւորելու: | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2. Տարբերել անվտանգ եւ ռիսկային վարքագծերը:<br>3. Բացատրել, թե ինչպես են վնասակար սովորություններն ազդում առողջական եւ հոգեկան վիճակի վրա:<br>4. Նկարագրել ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների, նարգիլեի, նիկոտին պարունակող այլ արտադրանքի (վեյփեր, սնուս եւ այլ) կարճաժամկետ եւ երկարաժամկետ հետեւանքները, թվարկել կախվածության նշանները, վտանգները եւ հետեւանքները:<br>5. Ճանաչել հնարավոր վտանգավոր եւ անվտանգ գործողությունները էլեկտրոնային միջոցների օգտագործման, մոլախաղերի եւ ռիսկային հարաբերությունների դեպքում:<br>6. Մեկնաբանել, թե ինչպես ուրիշները կարող են ազդել առողջությանը վերաբերող իրենց որոշումների կայացման վրա, օրինակ՝ մեքենա վարելը, մոլախաղերը: Տարբերակել կողմնակի դրական եւ բացասական ազդեցությունները, ինչպես նաեւ գովազդի, ֆիլմերի ազդեցությունը: Ցուցադրել վտանգավոր իրավիճակներից խուսափելու եւ հասակակիցների ճնշմանը դիմակայելու կարողություն:<br>7. Թվարկել հիմնական անվտանգության կանոնները եւ նշել՝ ում դիմել օգնության համար: | | | | | | | |
| 9 | Ծխախոտի ազդեցությունը | • Օգնել գիտակցելու ռիսկային վարքագծի դրդապատճառները:<br>• Նկարագրել ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների, նարգիլեի, նիկոտին պարունակող այլ արտադրանքի (վեյփեր, սնուս եւ այլ) կարճաժամկետ եւ երկարաժամկետ ազդեցությունը:<br>• Տեղեկացնել կախվածության նշանների, վտանգների եւ հետեւանքների մասին: | • Ներկայացնել՝ ինչու են դեռահասները հակված ռիսկային վարքագիծ դրսեւորելու:<br>• Բացատրել, թե ինչպես են վնասակար սովորություններն ազդում առողջական եւ հոգեկան վիճակի վրա, թվարկել կախվածության նշանները, վտանգները եւ հետեւանքները:<br>• Նկարագրել ծխախոտի, ծխախոտային արտադրատեսակների, նարգիլեի, նիկոտին պարունակող այլ արտադրանքի (վեյփեր, սնուս եւ այլ) կարճաժամկետ եւ երկարաժամկետ հետեւանքները: | | 1 | | 1 | |
| 10 | Անվտանգ և ռիսկային վարքագիծ: Ինչպես կարողանալ «ոչ» ասել | • Օգնել գիտակցելու եւ նվազեցնելու ուրիշների ազդեցությունը իրենց որոշումների վրա:<br>• Ներկայացնել եւ դիտարկել տարբեր հնարավոր վտանգավոր իրավիճակներ, օգնել մշակելու դրանցից խուսափելու միջոցներ եւ անվտանգության կանոններ: | • Ճանաչել հնարավոր վտանգավոր եւ անվտանգ գործողությունները էլեկտրոնային միջոցների օգտագործման, մոլախաղերի եւ ռիսկային հարաբերությունների դեպքում:<br>• Մեկնաբանել, թե ինչպես ուրիշները կարող են ազդել սեփական առողջությանը վերաբերող որոշումների կայացման վրա, օրինակ՝ մեքենա վարելը, մոլախաղերը, տարբերակել կողմնակի դրական եւ բացասական ազդեցությունները, ինչպես նաեւ | | 1 | | 1 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գովազդի, ֆիլմերի ազդեցությունը: Ցուցադրել վտանգավոր իրավիճակներից խուսափելու եւ հասակակիցների ճնշմանը դիմակայելու կարողություն: • Թվարկել հիմնական անվտանգության կանոնները եւ նշել՝ ում դիմել օգնության համար: | | | | | |
| **ԹԵՄԱ 5** | Բռնության տեսակները և թյուրընկալումները | | | | | | | |
| **ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ** | Օգնել հասկանալու բռնության տեսակները, դրանց փոխկապվածությունը, բուլինգը, կիբերբուլինգը եւ տրոլինգը, դրանց բացասական ազդեցությունը, անթույլատրելիությունը, հնարավոր հետեւանքները: Իրազեկել բռնության անթույլատրելիության, քրեական պատասխանատվության, բռնությունից պաշտպանվելու հնարավորության, օգնության մասին: | | | | | | | |
| **ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ** | 1. Տարբերել բռնության եւ ոտնձգության տեսակները՝ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, անտեսում, վերահսկում:<br>2. Պատկերացում ունենալ բռնության անթույլատրելիության եւ դատապարտելիության մասին:<br>3. Ներկայացնել՝ անհրաժեշտության դեպքում որ աջակցող մարմիններին եւ ինչպես կարելի է դիմել:<br>4. Ներկայացնել՝ ինչպես վարվել բռնության ականատես լինելու դեպքում:<br>5. Նկարագրել եւ տարբերակել բուլինգը, կիբերբուլինգը եւ տրոլինգը:<br>6. Ներկայացնել բռնության եւ բուլինգի բացասական ազդեցությունը եւ հնարավոր հետեւանքները:<br>7. Նկարագրել բռնության եւ բուլինգի կանխարգելման հնարավոր ձեւերը: | | | | | | | |
| 11 | Բռնության տեսակները, թյուրընկալումները և հետևանքները | Ընկալել բռնությունը՝ որպես երեւույթ, եւ դրա տեսակները, ինչպես նաեւ հասկանալ եւ ներկայացնել բռնության բացասական ազդեցությունը: | • Տարբերել բռնության եւ ոտնձգության տեսակները՝ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, անտեսում, վերահսկում: • Պատկերացում ունենալ բռնության անթույլատրելիության եւ դատապարտելիության մասին: | | 1 | | 1 | |
| 12 | Բռնությանն արձագանքելը | Հասկանալ բուլինգին/բռնությանն արձագանքելու եւ բռնության ենթարկվածին աջակցելու կարեւորություն: | • Ներկայացնել՝ ինչպես վարվել բուլինգին/բռնությանն ականատես լինելու դեպքում: | | 1 | | 1 | |
| 13 | Բուլինգի տեսակները | Սովորողներին իրազեկել բուլինգի եւ նրա ազդեցության մասին, օգնել հասկանալու՝ ինչպես կանխարգելել այն: | • Նկարագրել եւ տարբերակել բուլինգը, կիբերբուլինգը եւ տրոլինգը: | | 1 | | 1 | |
| 14 | Բռնության և բուլինգի դրսևորումները, հետևանքները և կանխարգելումը | Բարձրացնել իրազեկումը բռնության եւ բուլինգի դրսեւորումների, դրանց հետեւանքների եւ կանխարգելման հնարավոր քայլերի վերաբերյալ: | • Ներկայացնել բռնության եւ բուլինգի բացասական ազդեցությունը եւ հնարավոր հետեւանքները: • Նկարագրել բռնության եւ բուլինգի կանխարգելման հնարավոր ձեւերը: | | 1 | | 1 | |
| **ԹԵՄԱ 6** | Սեռահասունացում, հոգեբանական փոփոխություններ | | | | | | | |
| **ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ** | • Օգնել գիտակցելու, որ դեռահասության տարիքի հոգեբանական փոփոխությունները հեշտ չեն անցնում, եւ դրանով էլ պայմանավորված են այդ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | շրջանի մի շարք դժվարությունները:<br>• Բացատրել մարմնի սխալ ընկալման հետեւանքները:<br>• Ներկայացնել «մարմնի սահմաններ» հասկացությունը: | | | | | | | |
| ԹԵՄԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ | 1. Նկարագրել հոգեբանական փոփոխությունների հնարավոր բարդությունները:<br>2. Բացատրել, որ մարմնի սխալ ընկալումը նպաստում է անորեքսայի եւ բուլիմիայի զարգացմանը:<br>3. Բացատրել դեռահասության տարիքում ֆիզիոլոգիական փոփոխությունները (տղաների շրջանում):<br>4. Մեկնաբանել, բացատրել մարմնի սահմանների, անձնական տարածքի, հպումների թույլատրելի եւ անթույլատրելի սահմանները, ինչպես վարվել, ում դիմել:<br>5. Տեղեկացված լինել՝ ինչ աղբյուրներից գտնել վստահելի տեղեկություն սեռահասունացման վերաբերյալ: | | | | | | | |
| 15 | Հոգեբանական փոփոխությունները դեռահասության տարիքում | Օգնել գիտակցելու, որ դեռահասի հոգեբանական փոփոխությունները հեշտ չեն անցնում, եւ դրանով էլ պայմանավորված են այդ շրջանի մի շարք դժվարությունններ: | • Նկարագրել հոգեբանական փոփոխությունների հնարավոր բարդությունները:<br>• Բացատրել դեռահասության տարիքում ֆիզիոլոգիական փոփոխությունները (տղաների շրջանում):<br>• Տեղեկացված լինել՝ ինչ աղբյուրներից գտնել վստահելի տեղեկություն սեռահասունացման վերաբերյալ: | | 1 | | 1 | |
| 16 | Մարմնի ընկալումը, սխալ ընկալման հետևանքները | Բացատրել մարմնի սխալ ընկալման հետեւանքները: | • Բացատրել, որ մարմնի սխալ ընկալումը նպաստում է անորեքսայի եւ բուլիմիայի զարգացմանը: | | 1 | | 1 | |
| 17 | Անձնական սահմանները | Ներկայացնել «մարմնի սահմաններ» հասկացություն: | • Մեկնաբանել, բացատրել մարմնի սահմանները, անձնական տարածքը, հպումների թույլատրելի եւ անթույլատրելի սահմանները, ինչպես վարվել, ում դիմել: | | 1 | | 1 | |
| | | | | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *17* | *0* | *17* | |